

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՀԱԿԱԲՈՐԱԽԱՅՏԱՅԻՆ ՇԻՃՈՒԿ, Նոյեմբեր մէկին բժիշկ Մարտին ներկայացրեց Պարիզի բժշկական ճեմարանին մի զեկուցում իր նոր գտած հակագնդկախտային շիճուկի մասին:

Երկար տարիների փորձերից Մարմորեկը համոզուեց, որ Կովիլ տուբերկուլինը գնդկախտի իսկական թոյնը (ՏՕԵՍԻՆԻ) չէ. տուբերկուլինը, որ մեծ մասամբ պատրաստում է հինգնդկախտային բացիլներից, միայն նրա տարրաբանական ֆերմենտն է. որ ներդուժում է բացիլների վրայ և առաջացնում գնդկախտի նոր գտած իսկական թոյնը:

Մարմորեկի կարծիքով դրանով է բացատրում այս հանգամանքը, որ Կովիլ տուբերկուլինը, մտցնելով առողջ կազմուածքի մէջ, ուր առաջ գնդկախտային բացիլներ չկային, նրա վրայ ոչ մի ներգործութիւն չէ անում. Մարմորեկը մշակում էր Կովիլ մատաղ բացիլները, որոնց ճարպային մաշկը դեռ ևս չէ զարգացել, յատուկ միջավայրում, բաղկացած հորթի ըսրում և բարձրացնելու համար բացիլները ին (ГЛИЦЕРИНԻ) արգանակից. ոյդ վայրում բացիլները արձակում են իրենցից ոչ թէ տուբերկուլին, այլ միմիայն գնդկախտային նոր գտած թոյնը (ՏՕԵՍԻՆԻ): Այդ թոյնով պատուաստուած ճագարները և ծովային խոզերը շուտով սատկում են, իսկ չիներին նոյն թոյնով պատուաստելով Մարմորեկը դտաւ հակագնդկախտային շիճուկը, 15 հարիւրագրամ այդ շիճուկից դարձնում է ճագարին գնդկախտին անընդունակ:

Եւրոպայի զանազան քաղաքներում այդ փորձերը կատարուեցան և մարդկանց վերայ:

Մի տարուայ ընթացքում 2 հազարից աւելի փորձերը կատարուեցան:

Այդ բոլոր փորձերը հետևեալ հետեանքն ունեցան. 1) Թոքերի գնդկախտային ամենասուր հիւանդութեան ժամանակ, բացիլների և խորխի քանակութիւնը զգալի կերպով պակասեց: Կրծքի հետազօտութիւնից ապացուցուեց հիւանդութեան ընթացքի յետադիմութիւնը: 2) Քրտնքային շատ հիւանդութիւններ, բարդուած խոցերով և թարախներով, բոլորովին լաւցան: 3) Լանջամաշկատապի ժամանակ արագ պակասում է հեղուկը: 4) Վզի, աճուկի (օսաճ) և փոքր կոնքի գնդկախտի ժամանակ երկաթային զանգուածը կանոնաբորապէս պակասում է:

5) Կաշուկի գնդկախտային խէժը (ցոյմա), որոնց երկար ժամանակ անկարելի էր բժշկել, չորանում է: 6) Մարմորեկի շիճուկը երբէք ոչ ընդհանուր և ոչ էլ մասնաւոր հակաղդեցութիւն չէ: դործում հիւանդի վրայ: (ԽօՏ. օ6.)

ՀԱՅԱՀԱՐԱՐԻ ՔԱՅԹԻՆ ՇԻՃՈՒԿ. Բժշկապետ Շանտեմիսը գտել է հակահարինքային շիճուկ Կատարած 100 փորձերից բժշկուել են 97:

Լրագիրների ասելով, Շանտեմիսի շիճուկը շուտով կսկսեն դործածել բժշկականութեան մէջ (ԽօՏ. օ6.)

ԱՐԴԴԻՒՔ ԱՐԴԻՒԽՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ: Բաղին, որ այդպէս կարճ ժամանակում ահազին հռչակ ստացաւ, մի զարմանալի փայլող մարմին է, որի մէջ մեծ քանակութեամբ բնութեան ոյժ է թագնուած և ամեն ից թանգ առարկաներին է պատկանում աշխարհիս երեսին: Պէտք է ահազին քանակութեամբ հանք մշակել, որ կարելի լինի մի գրամ մաքուր բաղդի ստանալ: Չնայելով դրան, Ֆրանսիայում և Գերմանիայում վերջին ժամանակներու սկսել են բադդին արդիւնագործել: Մի գրամ բադդին մօտաւորապէս 3,700 ը. արժէ: Ներկայումս արդիւնաբերողները արդէն մի քանի հարիւր գրամ բադդիի պատուէր ունին: Բաղդին ունի նէօնսգէնեան ճառագայթների բոլոր յատկութիւնները և մինոյն ժամանակ անփոփոխ մի մարմին է: Այժմ ապացուցուած է, որ բադի փետուրից ոչ հասա մի փոքր խողովակով բադդին, պարունակելով իր մէջ ոչ աւելի քան մէկ միլիլից քամ, մինոյն ոյժն ունի, ինչ որ թանկադին և ուժող և լիեկտրական դործիքը և օգուտ է ըերում խլիբուի բժշկման ժամանակ. բադդիի յատկութիւնը, այն է լոյս և տաքութիւն արծակել և բոլորովին առանձին կերպով ներգործել ինքնափայլ մարմինների վրայ, լոյս տուեց, որ նամեծ դեր պիտի խաղայ լուսաւորութեան արդիւնագործութեան ասպարիզում: (Դ. Պ.)

ԳՐՈՂ ՀԵՌԱԽՈՅՍ. Բերլինում սկսել են դործածել արդէն գրող հեռախօսը, որի կազմութիւնը այսպէս է. գրող մեքենայի վրայ գրածը հաղորդւում է գրող մեքենային տառելով, երբ որ այդ մեքենան միացնում են արտնենտի հետ հեռախօսի ժապաւէնուի: Այդպիսով մարդ, եթէ միայն գիտէ գրել գրող մեքենայով, կարող է հաղորդել ինչ որ կամենայ միւս արտնենտին. վերջինս կարող է դործիքի մօտ լինել, ինչպէս որ լինում է սովորական հեռախօսի ժամանակ, որովհետեւ լուրը հաղորդւում է ուղղակի թղթի վրայ գրած, եթէ միայն գործիքը չէ փակուած:

Նոր հեռախօսի շատ առաւելութիւններից հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որ հաղորդուածը ուրիշներից ոչ ոք չ կարող լսել և որ նա հազորդուածը է ճըշտութեամբ. կասկած չկայ, որ այդ նոր գիւտը շուտով կտարածուի: (ԽօՏ. օ6. 2.)

ՄԱՐԴԿԱԼԹԻՆ ՄԱՐՄՆԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ. Փարիզի դիտու-
թեանց ճեմարանում Արսոնվալը ներկայացրեց մի շատ հետառ
քրքրական զեկուցում, անդիմական համալսարանի Շապանտէ
և Բլոնդիլո պրօֆէսորների կողմից:

Ինչպէս երկում է մարդկային մարմինը բադիկի և կամ
կրուկի գործիքին ճառագայթներ է արձակում:

Մարդկային մարմինը, ինչպէս և բադին, յատկութիւն
ունի երանից ճառագայթներ արձակելու, որոնք ներգոր-
ծում են մի քանի զդայուն մարմինների վրայ: Այդ ճա-
ռագայթների յատկութիւնը դեռ ևս լաւ չէ հետազօ-
տուած: Նրանք կարծես թէ պատկանում են N ճառա-
գայթներին, որ գտել է Շարպանտին և որոնք կոչում են այդ
անունով ի պատիւ նանսի քաղաքի, որտեղ ապրում և գործում
է գիտանականը: Բոյոր այդ ճառագայթները համարեա թէ նոյն
արագութիւնն ունին, որքան և լոյսի ճառագայթները և այն
յատկանիշն ունին, որ ջրով թաց արած թղթից ճառագայթնե-
րը բեկրեկուում են:

Որպէս զի կարելի լինի մարմնի ճառագայթները տեսա-
նելի դարձնել, Շարպանտին և Բլանդիլոն այսպէս են վարում.
Մի որոշ տեղի վրայ ուղղում են կրուկի ճառագայթները.
այդ տեղը կակսի լուսաւորուի և ֆլորաֆայլի (ֆլորեսցենիա)
յատկութիւնը ստանալ: Եթէ կրուկսի գործիքի տեղ դնենք րա-
դին մինենյն տպաւորութիւնը կստանանք, միայն աւելի թոյլ:
Վերջապէս եթէ այդ տեղին մօտեցնենք մարդու մարմինը, ֆլո-
րաֆայլը թեթև կերպով կաւելանայ, եթէ մկանը ձգենք տուած
տեղի վրայ համապատասխան տեղում:

Սյուտեղից երեսում է, որ նոր ճառագայթների օգնութեամբ,
կարելի է թուաբանական ճշտութեամբ որոշել մկանների և ջղերի
աշխատանք:

Նոր ճառագայթները անփոխարինելի միջոց կլինին նաև
որոշելու մարդու մահն ու կեանքը:

Ֆրանսիական գիտնականների նոր գիւտի ամբողջ արժեքը
կարելի է գնահատել ապագայում:

ՄՐՑԻ ՄԱԼՍՍԱԾԻ: Ամերիկայի բժիշկ դոկտոր Ստերլինգին
յաջողուեց, սիրու մերսերու միջոցով, կենդանացնել մարդու հա-
մարեա թէ անշունչ յօրինուածքը:

Առաջ էլ, շատ անդամ դիմել են այդ ծայրայեղ միջոցին.
սիրու կորում էին և վերցնելով ձեռքին մերսում, դադա-
րուած բարախումը կրկին զարթեցնելու համար Բայց մինչեւ
այժմ ոչ մի հետևանք չէր ունեցել:

Ստերլինգին յաջողուեց կենդանացնել համարեա թէ մե-
ռած մարդուն. նա անդամահուաց փակաղիքի բորբոքումով
հիւանդ 65 տարեկան ծերին, առաջուց թմրեցնող դեղ տալով
նրան: Յանկարծ բժիշկը նկատեց որ զարկը և շնչառութիւնը
սկսում են թուանալ և լերջապէս բուրովին դադարեցին:
Երբ սովորական միջոցները չօգնեցին, արհեստական միջոցով

շնչառութիւնը զարթեցնելու համար, նա դիմեց ծայրայեղ մի-
ջոցի, ձեռքը ներս տանելով՝ անդամահատութեան ժամանակ
փորի վրայի կտրած տեղից, ստոծանիի միջով շօշափեց անկենդան
սիրտը և ձեռքով ճնշեց: Սիրտը սկսեց նորից բարախել, թէ-
պէտ ձեռքը զարկը դեռ ևս չէր նկատում. Անմիջապէս կը-
կննցին արհեստական կերպով շնչառութիւնը կատարելու և
կենդանութիւնը վերականգնելու ուրիշ միջոցները և 12
ըոպէից յետոյ շնչառութիւնը բոլորովին վերականգնեց:
Անդամահատութիւնը շարումնակուեց առանց թմրեցնող դե-
ղի և հիւանդը բոլորովին առաղջացաւ: Թէպէտ այս դէպ-
քը առաջինն է, բայց ցոյց է տալիս, թէ ինչքան բան կա-
բելի է սպասել բժշկութեան այս եղանակից: (Ա. Բ.)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՊԱՐԻԶԻ ՄԱՑԵՆԱԴԱՐԱՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻԾ

Ինչպէս յայտնի է, ներկայում Պարիզի մի նշանաւոր փո-
ղոցում գնուած ընդարձակ գետնի վերայ կառուցւում է
տեղական հայերի համար եկեղեցի: Արտասահմանի հայ թեր-
թերը խօսելով այդ եկեղեցու կառուցման մասին՝ առաջարկում
են դորան կից հիմնել մի հայկական մատենակարան և վերջնիս
սկզբնաւորութեան համար գնել այն հարուստ գրադարանը,
որ թողել է իւր մահուանից յետոյ նորերումս վախճանուած
գիտնական Սուքիսա վարդապետ Պարոնեանը: Գեղեցիկ դիտա-
ռութիւն:

Վ. ԿՈՐՈԼԵԿԱԿ և Ա. ԶԵԽՈՎ.

Ներկայ թուականին ոռւս մամուլը և գրական լրջաննե-
րը տօնեցին երկու նորագոյն գրողների՝ Վ. Կօրոլէնկօի
և Ա. Զեխօվի քսանենինդամեայ գրական գործոնէու-
թիւնը: Երկու գրողներն էլ, ինչպէս յայտնի է, յառաջադպէմ ուղ-
ղութեան վիպագրողներից են և հաւասար պատիւ են վայելում